ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.12.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ 45/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Տեխնո-Ար» ՍՊԸ-ի 03.12.2015թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-45/15 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.12.2015թ. ԴՎԱ/3014 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը, Ընթացակարգի հրավերը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 18.12.2015թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Տեխնո-Ար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 03.12.2015թ. ներկայացրած բողոքով «Տեխնո-Ար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից տնտեսական, սանիիգենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/75» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգով գնման առարկան է հանդիսացել «Արկղեր հենակետի սննդի պահպանման համար /կոմբինացված/»:

27.11.2015թ. էլեկտրոնային փոստի միջոցով ստացվել է ծանուցում այն մասին, որ Ընկերության հայտը մերժվել է, քանի որ գնային առաջարկը չի համապատասխանել հրավերով սահմանված կարգին:

Ընկերությունը հայտնել է, որ բանավոր ներկայացված պարզաբանումներից պարզվել է, որ հայտի մերժման համար հիմք է հանդիսացել Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում տեղ գտած թվաբանական վրիպակը:

Մասնավորապես, մեկ միավորի համար առաջարկված գինը թվերով նշվել է 187200, իսկ տառերով «երկու հարյուր չորս հազար ՀՀ դրամ»: Արդյունքում առաջարկված ընդհանուր գինը թվերով նշվել է 55036800 ՀՀ դրամ, իսկ տառերով «հիսունհինգ միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար ՀՀ դրամ»: Այսինքն, թվերով նշված միավորի գինը և դրա հիման վրա հաշվարկված ընդհանուր գինը տարբերվում է տառերով նշված մեկ միավորի գնից և դրա հիման վրա հաշվարկված ընդհանուր գնից: Ակնհայտ է, որ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, որը, սակայն, հայտը մերժելու հիմք չի կարող հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը: Ընդ որում, թվաբանական սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում հետևյալ կարգով, եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի և տվյալ (առանձին) ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր քանակի սխալ բազմապատկման արդյունք է, ապա ուղղումը կատարվում է միավորի համար առաջարկված գնի պահպանմամբ (հիմք ընդունելով տառերով գրվածը)՝ փոխելով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության համար առաջարկված ընդհանուր գինը:

Կարգի նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկները:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 1-ին մասի 7.2.3 կետի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով

գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ տվյալ օրվա Կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքով:

Հրավերի մաս 2-րդ՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի Հրահանգի՝

- 4.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինն ապրանքի արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով Համակարգի միջոցով:

- 4.1.1 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա մասնակցի կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով ներբեռնված փաստաթղթով ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

ա. Մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն:

- 4.2 կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով և Համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Ընկերությունը նշել է, որ հայտում պահպանվել են հրավերով նշված բոլոր պայմանները, բացառությամբ տեղ գտած վերոհիշյալ վրիպակի:

Հրավերի 1-ին մասի 7.3 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են

անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ըստ «Տեխնո-Ար» ՍՊԸ-ի՝ նշված պայմաններում հայտերի բացման նիստում տեսնելով գնային առաջարկում տեղի ունեցած անհամապատասխանությունը, գնահատող հանձնաժողովը պարտավոր էր կասեցնել նիստը և առաջարկել շտկելու անհամապատասխանությունը կամ ղեկավարվելով հրավերի 7.2.3 կետով և Կարգի 44-րդ կետի 3-րդ ենթակետով՝ կատարել թվաբանական սխալների ուղղում՝ հիմք ընդունելով տառերով գրված գները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է չեղյալ հայտարարել հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը և գնային առաջարկում տառերով նշված գինը հիմք ընդունելով, կատարել թվաբանական սխալների ուղղում:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 14.12.2015թ. ԴՎԱ/3014 գրությամբ «Տեխնո Ար» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/75» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի գնահատումը կատարվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ հայտերի բացման նիստում, որն իրականացվել է 2015թ. նոյեմբերի 27-ին, Ընթացակարգի մասնակից «Տեխնո-Ար» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է Կարգի 45-րդ կետի հիմքով՝ գնային առաջարկը ներկայացված է եղել հրավերի պահանջներին անհամապատասխան:

Մասնավորապես, ներկայացված գնային առաջարկում գնման առարկայի միավորի ու ընդհանուր գների տառերով և թվերով գրվածների միջև տեղ գտած անհամապատասխանության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների հիման վրա, հիմք ընդունելով տառերով գրվածը,

անհամապատասխանություն է առաջացել միավորի գնի ինքնարժեքի, շահույթի և ավելացված արժեքի հարկի հանրագումարը տառերով գրված միավորի գնի հետ:

Այսինքն, հայտնաբերված սխալը չի հանդիսանում միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի և տվյալ ապրանքի ընդհանուր քանակի սխալ բազմապատկման արդյունք:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգը հայտարարվել է չկայացած, քանի որ Ընթացակարգի 2-րդ մասնակցի կողմից առաջարկված գինը գերազանցել է տվյալ գնման համար նախատեսված նախահաշվային գինը և վերջինս բանակցությունների ժամանակ չի համաձայնել այն նվազեցնել:

3. <u>ԳԲԽ-45/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 18.12.2015թ. եզրակացությունը և առաջարկել է «Տեխնո-Ար» ՍՊԸ-ի 03.12.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքը՝ մերժել:

4. <u>ԳԲԽ-45/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-45/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տնտեսական, սանիտարական և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/75» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Տեխնո-Ար» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի N 4 հավելվածով՝ գնային առաջարկով հայտնել է, որ ուսումնասիրելով հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը՝ առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

Չափաբաժինների համարը	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակ	Ինքնարժեք (Մեկ միավորի գնի մասով)	Շահույթ (Մեկ միավորի գնի մասով)	ԱԱՀ (Մեկ միավորի գնի մասով)	Մեկ միավորի առաջարկված գինը /տառերով և թվերով/	Առաջարկված ընդհանուր /չափաբաժնի/գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6	7	8=5+6+7	9=8x4
1	Արկղեր/հենակետի Սննդամթերքի պահպանման կոմբինացված/	հատ	294	148200	7800	31200 (երեսուն-չորս հազար դրամ)	187200 (երկու հարյուր հազար ՀՀ դրամ)	55036800 (հիսունհինգ միլիոն հարյուր յոթանասունվեց հազար ՀՀ դրամ)

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 27.11.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 3.2 կետով կայացվել է որոշում, համաձայն որի՝ «Տեխնո-Ար» ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես, առաջարկված գնի թվերով և տառերով արտահայտված տվյալները չեն համապատասխանում:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Քննելով «Տեխնո-Ար» ՍՊԸ-ի 03.12.2015թ. ներկայացրած բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արտարժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացված կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Կարգի նույն կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով.

Կարգի 44-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը: Ընդ որում, թվաբանական սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում հետևյալ կարգով, եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի և տվյալ (առանձին) ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր քանակի սխալ բազմապատկման արդյունք է, ապա ուղղումը կատարվում է միավորի համար առաջարկված գնի պահպանմամբ (հիմք ընդունելով տառերով գրվածը)՝ փոխելով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության համար առաջարկված ընդհանուր գինը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ ***գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության 28.03.2013թ. թիվ 1.1/13.1/4089-13 շրջաբերականի՝ հայտի գնային առաջարկը գնահատելիս հիմք է ընդունվում տառերով նշված գումարը, իսկ մասնակցի հայտի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին՝ օրինակ, եթե ներկայացված հայտում ինքնարժեքի, շահույթի և ԱԱՀ-ի

հաշվարկի թվաբանական գումարը չի համապատասխանում տառերով գրված գումարին՝ գնահատվում է հիմք ընդունելով տառերով գրվածը և հայտը գնահատվում է անբավարար:

Այսպիսով, Ընկերության կողմից հայտի հավելված N 4 գնային առաջարկը ներկայացվել է մի շարք թվաբանական սխալներով, ընդ որում ավելացված արժեքի հարկը լրացվել է տառերով և թվերով:

Խորհուրդն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Ընկերության կողմից ներկայացված հայտում մեկ միավորի համար առաջարկած գնի ինքնարժեքի և շահույթի հանրագումարի ԱԱՀ-ի գումարը՝ 20 տոկոսը կազմել է թվերով՝ 31200 ՀՀ դրամ, իսկ տառերով՝ երեսունչորս հազար ՀՀ դրամ: Խորհուրդը գտնում է, որ պետք է հիմք ընդունել ԱԱՀ-ի տառերով գրված տարբերակը՝ մեկ միավորի համար ինքնարժեքի, շահույթի և ԱԱՀ-ի հաշվարկի թվաբանական գումարը (148200+7800+երեսունչորս հազար) չի համապատասխանում մեկ միավորի համար առաջարկվող գնի տառերով գրված՝ երկու հարյուր չորս հազար ՀՀ դրամ գումարին:

Ընկերության այն պնդման կապակցությամբ, որ հայտի գնային առաջարկում տեղի է ունեցել անհամապատասխանություն, որը ենթակա էր շտկման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ Խորհուրդը գտնում է, որ մասնակցի կողմից հայտում տեղ գտած անհամապատասխանությունը շտկելու նպատակով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից նիստը մեկ օրով կասեցվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ուստի տվյալ դեպքում նիստը մեկ օրով կասեցնելու անհրաժեշտությունը վերացել է:

Ինչ վերաբերում է «Տեխնո-Ար» ՍՊԸ-ի բողոքով ներկայացրած՝ գնային առաջարկում տառերով նշված գինը հիմք ընդունելով թվաբանական սխալների ուղղում կատարելու պահանջին, ապա Խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում գնային առաջարկում թվաբանական սխալ չի հայտնաբերվել, քանի որ միավորի համար Ընկերության կողմից սահմանված գնի (երկու հարյուր չորս հազար) և ձեռքբերվող ապրանքի ընդհանուր քանակի (294 հատ) բազմապատկման արդյունքում ստացվում է նույն գնի առաջարկում պայմանագրի համար տառերով արտահայտված՝ հիսունինը միլիոն ինը հարյուր յոթանասունվեց հազար ՀՀ դրամ ընդհանուր գինը:

Խորհուրդը հայտնում է, որ Պատվիրատուի կողմից չեն խախտվել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասով, Կարգի 44-րդ և 45-րդ կետերով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տեխնո-Ար» ՍՊԸ-ի 03.12.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Վարդան Ավետիսյան**

Անդամներ՝ **Դիանա Գրիգորյան**

Մարիամ Սարգսյան